

ԵՊՀ գիտական խորհրդի
2022 թ. նոյեմբերի 24-ի թիվ 3/5 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:
3. Կենտրոնի հաստիքացուցակը հաստատվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից ռեկտորի ներկայացմամբ:
4. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Կենտրոնի խնդիրներն են.
 - 1) աջակցել ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (ՈՒԽ, ՈՒԳԸ և ուսանողական այլ կազմակերպություններ)՝ ռեկտորատի հետ համագործակցությանը,
 - 2) աջակցել ուսանողական կազմակերպությունների գործունեությանը՝ նրանց անդամների համար պարբերաբար կազմակերպելով մասնագիտական ու կազմակերպչական կարողությունների զարգացման դասընթացներ ու կրթական այլ միջոցառումներ,
 - 3) համախմբել ԵՊՀ տարածքում գործող և ուսանողների ու մյուս սովորողների կողմից ստեղծված միավորումներին, ակումբներին ու միություններին, աջակցել ԵՊՀ-ում բարենպաստ միջավայրի ստեղծմանը՝ նպաստելով սովորողների գիտական, կրթական, մշակութային, հոգևոր ու ֆիզիկական զարգացմանը,
 - 4) նպաստել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կեցության կազմակերպմանը, ուսանողների ազատ ժամանցի ու հանգստի կազմակերպմանը, ինչպես նաև ԵՊՀ տարածքում ուսանողների կարգապահության բարձրացմանը միտված ծրագրերի իրականացմանը,

5) սատարել գիտական ու կրթական ոլորտներում ուսանողական նախաձեռնությունների իրականացմանը՝ աջակցելով գիտաժողովների, համաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտական ու կրթական այլ ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպմանը,

6) մշակել ու իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպատակաուղղված արտալսարանային ծրագրեր՝ ուսանողների ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու համար,

7) կազմակերպել ուսանողական արտալսարանային միջոցառումներ, տրամադրել համապատասխան տեղեկատվություն, մշակել ու իրականացնել ուսուցման արդյունավետության բարձրացմանը միտված ծրագրեր,

8) համակարգել ուսանողական նախաձեռնությունների, միջոցառումների, ծրագրերի պլանավորման, կազմակերպման, իրականացման ու վերահսկման գործառույթները,

9) լուծել Կենտրոնի հիմնական գործունեությանն առնչվող այլ խնդիրներ:

6. Կենտրոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և ԵՊՀ ներքին իրավական ակտերին:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7. Կենտրոնը ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, որին պաշտոնի նշանակում ու պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

8. Կենտրոնի տնօրենը՝

1) կազմակերպում ու վերահսկում է Կենտրոնի ընթացիկ (ամենօրյա) գործունեությունը, Կենտրոնում վարվող գրագրությունն ու ներքին գործավարությունը,

2) ապահովում է Կենտրոնի գործառույթների պատշաճ իրականացումը, լուծում դրանց իրագործման ընթացքում ծագած խնդիրները, Կենտրոնի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման,

3) Կենտրոնի աշխատողների միջև կատարում է աշխատանքային գործառույթների բաշխում,

4) ստորագրում է Կենտրոնի կողմից պատրաստվող փաստաթղթերը, Կենտրոնի գործառույթների շրջանակում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ, մասնագիտական եզրակացություններ և այլ փաստաթղթեր,

5) մասնակցում է ԵՊՀ ռեկտորատի նիստերին, ԵՊՀ ռեկտորի կողմից հրավիրված խորհրդակցություններին, ԵՊՀ մշտական ու ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին՝ անհրաժեշտության դեպքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնելով մասնագիտական կարծիքներ ու եզրակացություններ,

6) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում Կենտրոնի աշխատողներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, վերապատրաստելու, առեստավորելու կամ նրանց պաշտոնեական առաջխաղացման վերաբերյալ,

7) առաջարկություն է ներկայացնում իր բացակայության ժամանակ իրեն փոխարինող նշանակելու վերաբերյալ,

8) սահմանված կարգով տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական միջոցները,

9) Կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

10) իրականացնում է Կենտրոնի գործունեությանն առնչվող, ՀՀ գործող օրենսդրությանն ու ԵՊՀ կանոնադրությանը չհակասող այլ գործառույթներ:

9. Կենտրոնի աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով (աշխատանքային նկարագրով), ԵՊՀ ներքին իրավական ակտերով ու Կենտրոնի տնօրենի հանձնարարականներով:

10. Աշխատանքային պարտականությունների կատարման արդյունքում ԵՊՀ-ին գույքային (նյութական) վնաս պատճառելու դեպքում աշխատողները կրում են գույքային ու անձնական լիակատար պատասխանատվություն:

11. Կենտրոնի աշխատողներն ունեն օրենքով, ԵՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով, ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում են այդ ակտերով նախատեսված պարտականություններ (սահմանափակումներ):

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

13. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ԵՊՀ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

14. Սույն կանոնադրությունը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքում: